



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2006  
Մարտ 20, 1995

Արժանաշնորհ  
Տ. Սահակ Բհնյ. Բէյիշեան  
Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Հէյվըրհի.

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 16, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 22, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Զարթի Զիլինկիրեան
- Էտուըրտ Տէր Պօղոսեան
- Վիրճինիա Զօպանեան
- Էտուըրտ Պասմաճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տեղեկագիրը ցոյց կու տայ որ 1994 տարուան «Լումա»-ի հաշույն համայնքդ պարտական է 645.00 (վեց հարիւր քառասունըհինգ) տոլար, եւ Ծխական Ժողովի ատենագրութիւնը չէ ստորագրուած օրուան Ատենապետին կողմէ: Բարի եղէք առաջին առիթով ստորագրուած ատենագրութիւն մը դրկել Առաջնորդարան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Khajag Barsamian*  
ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2013  
 Մարտ 23, 1995

Արժանաշնորհ  
 Տ. Սահակ Բհնյ. Քէյիշեան  
 Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
 Հէյվըրհիլ.

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք Փետրուար 16, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ Ծիսական Խորհուրդի անդամներէն Ռիչըրտ Մագնիլ եւ Սանտրա Տաշօ Աերկայացուցած են իրենց հրաժարականները:

Նկատի ունենալով որ յիշեալ անդամները անցեալ տարի ընտրուած են եւ թե՛նաժուներու ցանկին վրայ անձնափոխանորդներ չեն եղած, այսու գիրով կը հաստատենք այս տարուան ընտրութեան անձնափոխանորդներ Մէլմս Տէրտերեանը եւ Պարպըրա Սարգիսեան—Արթըրը որպէս Ծիսական Խորհուրդի անդամ, մինչեւ աւարտուի հրաժարած անդամներու շրջանին:

Սիրոյ ողջունի

*Խաժաղ Արք. Կիւսանյան*

ԽԱԺԱԿ ԱՐԿ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
 Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2301

Մարտ 27, 1996

Արժանաշնորհ  
Տ. Սահակ Բհնյ. Բէյիշեան  
Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Հէյվըրհիլ

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 12, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 28, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ալպրոթ Մովսէսեան  
Ժէյմս Տէրտէրեան  
Ան Տրուին  
Հարրի Գասպարեան  
Սինթիա Գասպարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցւանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2396  
 Յունիս 4, 1996

Արժանաշնորհ  
 Տ. Սահակ Բհնյ. Բէյիշեան  
 Հովիւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
 Հէյվըրթի

Միրելի Տէր Սահակ,

Ստացած ենք Մայիս 17, 1996 թուակիր ձեր նամակը եւ կցեալ ատենագրութիւնը  
 Ապրիլ 28, 1996—ին գումարուած բացառիկ Անդամական Ժողովին:

Ձեր նամակով կը տեղեկացնէք թէ բացառիկ Անդամական Ժողովի ընթացքին  
 ընտրուած են Ծխական Խորհուրդի երեք անդամներ, հրաժարեալ անդամներուն տեղ, եւ  
 տալով քուէարկութեանց արդիւնքը կը խնդրէք նորընտիր անդամներու հաստատումը:

Այսու գիրով կը հաստատենք մէկ տարուան շրջանով ընտրուած հետեւեալ  
 անդամները.

Սթիւըն Արթըր  
 Սեւան Տէմիրճուճեան  
 Լուիս Նիգոլոսի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի  
 անդամներուն անունները, հասցէներն ու հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին  
 ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքերուն  
 յաջողութիւն պարգեւէ:

Միտոյ ողջունի

*Khajag Barsamian*

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
 Առաջնորդ